**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**09.09.2019թ. կնքված N <<ՁՈՒԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/2>> գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Երևան <<31>> հոկտեմբերի 2019թ.

<<<<Ձեյթուն>> ուսանողական ավան>> հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Վ. Պ. Մխիթարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Պատվիրատու>>, մի կողմից, և <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Լևոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Կատարող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 09.09.2019թ. կնքված N <<ՁՈՒԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/2>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5-րդ, 7.6-րդ կետերը, <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ-ի կողմից 25.10.2019թ.-ին ներկայացրած թիվ ՍՄ-19/58 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 09.09.2019թ. կնքված N <<ՁՈՒԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/2>> գնման պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>**
**<<<<Ձեյթուն>> ուսանողական ավան>> հիմնադրամ**
**ք. Երևան, Դավիթ Անհաղթ 10**
**<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ**
**<<Ձեյթուն>> մասնաճյուղ**
**Հ/Հ 163518002049**
**ՀՎՀՀ 00848282**

**Գործադիր տնօրեն՝ Վ. Պ. Մխիթարյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**<<ԿԱՏԱՐՈՂ>>**
**<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ**
**ք. Եղվարդ, Նար-Դոսի 28ա**
**<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ**
**Հ/Հ 163228137481**
**ՀՎՀՀ 03308717**
**Էլ. փոստ՝ sargismarianna@mail.ru**
**Հեռ. 093-90-88-68**

**Տնօրեն՝ Լ. Լևոնյան**

(ստորագրությունը)
Կ.Տ